600.0054.19.03.14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

19 մարտի 2014 թվականի №54Ն
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-Ի №110Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի զ) կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի սեպտեմբերի 16-ի «Էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգը հաստատելու մասին» №110Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում՝ էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգում (այսուհետ՝ Կարգ), կատարել հետևյալ փոփոխությունները.

   1) Կարգի 1-ին գլխից հանել «Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ՝» բառերը.

   2) Կարգի 4.3 կետում «Որոտանի ՀԷԿՀ» ՓԲԸ-ի» բառերը փոխարինել «Փոխհոսքերը իրականացնողի» բառերով.

   3) Կարգի 4.4 կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«4.4 Փոխհոսքերն իրականացնողի կողմից Բաշխողին առաքած էլեկտրաէներգիայի քանակությունը ($W_{Բ}$) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{Բ} = W_{ԱՌ} - W_{ԱԻ} + W_{ՀՀՆ},$$

որտեղ՝

Wսհ-ն Փոխհոսքեր իրականացնողի կողմից Իրանի Իսլամական Հանրապետություն առաքված էլեկտրաէներգիան է, բացառությամբ Իրանի Իսլամական Հանրապետություն արտահանելու նպատակով Վրաստանի Հանրապետությունից ներկրված, ինչպես նաև այլ պայմանագրերով Փոխհոսքեր իրականացնողին հանձնված էլեկտրաէներգիայի,

Wհհն-ն Հոսանքահաղորդման կետում հաշվառված՝ Իրանի Իսլամական Հանրապետությունից էլեկտրաէներգիայի ներհոսքն է:

Wբ-ի բացասական նշանով ստացվելու դեպքում այն համարվում է Փոխհոսքեր իրականացնողի կողմից էլեկտրաէներգիայի գնում Բաշխողից:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝

Շ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ք. Երևան
19 մարտի 2014թ.